C. E. P. F. A.

# ՖՐՄՈՒԿՅԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

No. 23

02.04.2024

## IMPROVET- AM ծրագրի մեկնարկը տրված է...

Լիոնում կայացած առաջին առկա հանդիպման ընթացքում տրվեց IMPROVET-AM ծրագրի մեկնարկը: Հագեցած շաբաթվա ընթացքում քննարկվեցին ծրագրի աշխատանքային փաթեթներում ներկայացված և իրականացվելիք աշխատանքները:

Նշենք, որ Էրազմուս+ ծրագրի շրջանակներում Լիոնի SEPR կամպուսը, Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնը, Գյումրու պետական բժշկական քոլեջը, Իտալիայի Apro Formazione ուսումնական կենտրոնը, HovakimyanLab ատամնատեխնիկական լաբորատորիան միավորում են իրենց ուժերը՝ ի նպաստ Հայաստանում մասնագիտական կրթության զարգացման:

Կարողությունների զարգացման ծրագիրն իրականացվում է «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության մեջ թվային գործիքների, տարեցների խնամքի կենտրոններում սոցիալ-սանիտարական օպերատորի մասնագիտության ներդրման և մասնագիտական կողմնորոշման ուղղություններով:

## Կարևոր հարցեր՝ երկրի գլխավոր ամբիոնից

Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ տեղի ունեցած խորհրդարանական լսումների ժամանակ ելույթ ունեցավ նաև կենտրոնի տնօրեն Գ.Գրիգորյանը:

«Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենսդրական բարեփոխումներն ու հիմնարար ուղղությունները թեմայով լսումների ընթացքում վերջինս կարևորեց ՄԿՈՒ ոլորտում միջազգային գործընկերների ձեռքբերումն ու կրթական ծրագրերի միջազգայնացման գործընթացը, անդրադարձ կատարեց Էրազմուս+ ծրագրի շրջանակներում հիմնադրամի որդեգրած քաղաքականությանը, իրականացվելիք գործընթացներին և գործընկեր կազմակերպություններին:

## Միջազգային գործընկերային գնահատում ՄԿՈՒ համակարգում

Ինչպե՞ս կիրառել ձևավորող գնահատման հնարավորությունները և նպաստել գործատուի համատեքստը ճանաչող շրջանավարտների պատրաստմանը՝ աշխատաշուկան համալրելով կարողունակ և մրցունակ մասնագետներով. այս ուղղությամբ Հայաստանը խորհրդատվություն կստանա: ՀՀ-ում քոլեջ-գործատու համագործակցության խթանումը կլինի Եվրո-

պական կրթական հիմնադրամի (ETF) ֆորումի գործընկերային գնահատման առանցքում:

Հայաստանում էր ՄԿՈՒ ոլորտում որակի ապահովման Եվրոպական կրթական հիմնադրամի ֆորումի ղեկավար Մունիր Բաատին, ով ՈԱԱԿ ներկայացուցիչների հետ ՍԵՊՖԱ-ում շրջեց բոլոր լաբորատորիաներում, ծանոթացավ կրթական գործընթացին: Մունիր Բաատին նախապատրաստում է ընթացիկ տարվա մայիսին սպասվող փորձագիտական մեծ խմբի այցը. 12 երկրից 15 փորձագետ Հայաստան կժամանեն, կլինեն քոլեջներում, կշփվեն գործատուների հետ, առաջարկներ կանեն:

Ի դեպ, կենտրոն այցելությունն ընտրել էին ոչ պատահական, քանի որ ՍԵՊՖԱ-ն կարողացել է շուրջ 100 գործատուի հետ պայմանագիր կնքել:

## Ամրապնդում ենք համագործակցությունը

Գյումրու պետական բժշկական քոլեջի «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության ուսանողները մեր հյուրն էին: «Լրիվ շարժական թիթեղային պրոթեզ» մոդուլի «Ատամնաշարվածք» թեմայով բաց դասի ընթացքում ՍԵՊՖԱ-ի ու Գյումրու քոլեջի ուսանողները միասնական գործնական պարապմունք անցկացրեցին: «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության պատասխանատու Լիլիթ Պապյանի նախաձեռնությունը հաջողությամբ

պսակվեց և ապագա ատամնատեխնիկները իրար հրաժեշտ տվեցին կրկին հանդիպելու ակնկալիքով: Դասը վարեցին Էրիկ Սարգսյանն ու Արման Եղիազարյանը, ովքեր իրենց գիտելիքները փոխանցեցին ուսանողներին: Նշենք նաև, որ Գյումրու պետական բժշկական քոլեջը և Ֆրանս-հայկական ուսումնական կենտրոն հիմնադրամը համագործակցում են Էրազմուս+ ծրագրի շրջանակներում:

## Փոխգործակցության նոր ուղի է հարթվում

Վանաձորի պետական բժշկական քոլեջի ներկայացուցիչները՝ տնօրեն Ջուլիետա Ջոկլինյանի գլխավորությամբ հանդիպում-քննարկում ունեցան ՍԵՊՖԱ-ի անձնակազմի հետ:

Այցին հաջորդեց միասնական գործնական պարապմունք, որին մասնակցեցին մեր կենտրոնի Ատամնատեխնիկական



գործ մասնագիտության 2-րդ և ՎՊԲՔ-ի նույն մասնագիտության ուսանողները: Վերջիններս պատրաստեցին անշարժ կոնստրուկցիաներ, կատարվեց գամիկների մոմով մոդելավորում և ձուլում: Դասը վարեցին Էրիկ Սարգսյանն ու Հայկ Օհանյանը, ովքեր իրենց փորձը փոխանցեցին ապագա ատամնատեխնիկներին:

## Կրթության իրավունք և մատչելիություն բոլորի համար

Ներառականության ապահովումը ՄԿՈՒ ոլորտում առաջնային խնդիրներից է: ՍԵՊՖԱ-ում տեղի ունեցավ «Համընդհանուր ներառական կրթական համակարգի ներդրումը նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ոլորտում» թեմայով դասընթաց: Դասընթացը վարեցին «Երևանի N4 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետներ Հռիփսիմե Բաղդասարյանը և Քրիստինե Մկրտչյանը: Նպատակն է՝ համատեղ ջանքերով լուծումներ գտնել թե՛ օրենսդրական մակարդակում, և թե՛ ոլորտում կարողությունների զարգաց-

ման, համապատասխան ծառայությունների ներդրման, միջավայրային հարմարեցումների տեսանկյունից: Այս ամենի իրագործումը միջին մասնագիտական կրթությունը կդարձնի մատչելի, հասանելի և ներառական:

## Կանխատեսել՝ ոչ, կանխարգելել հնարավոր է

Միջազգային փորձը վկայում է, որ անգամ տեխնիկապես գերհագեցած, զարգացած երկներում աղետները կանխատեսել հնարավոր չէ, բայց կանխարգելել հետևանքները հնարավոր է տեսական ու գործնական վարժանքներ անցկացնելով, հանրային իրազեկվածությունն ու պատրաստվածությունը բարձրացնելով:

Մարտի 1-ը Քաղաքացիական պաշտպանության միջազգային օրն է: Այս օրը նշում են որպես ՔՊ ուժերի և միջոցառումների մասին գիտելիքների տարածման և քարոզչության օր: Օրվան նվիրված միջոցառումների շրջանակում, «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամում տեղի ունեցավ «Անձնակազմի և ուսանողների գործողությունները «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում» թեմայով դասախոսություն:

Միջոցառման նպատակն է կատարելագործել անձնակազմի և ուսանողների գործնական հմտություններն արտակարգ իրավիճակներում գործելու ժամանակ:

## Ինչու՞ ունենալ կրակմարիչներ, ինչպե՞ս օգտագործել

Ինչպե՞ս ընտրել ճիշտ կրակմարիչ, ի՞նչ փոխազդեցություն կարող է առաջացնել սարքի պարունակությունը, ի՞նչ սխալներ են հաճախ հանդիպում. այս և այլ հարցերի պատասխանները ստացանք «Ինչպես դիմակայել աղետին» թեմայի շրջանակներում իրականացված հանդիպման ընթացքում: ԱԻ փրկարար ծառայության ներկայացուցիչը ներկաներին ծանոթացրեց հրդեհաշիջման և կրակմարիչների օգտագործման կարգին և թե ինչպես պետք է արտակարգ դրության ժամանակ դպրոցների վարչակազմն ու աշխատակիցները, ըստ ճշգրիտ գործողությունների կատարման պլանի, օգտագործեն կրակմարիչները:

## «Անմահները հրամայում են»

Հայոց բանակի օրվան և Պ.Սևակի ծննդյան 100-ամյակին նվիրված միջոցառումը ՍԵՊՖԱ-ում անցավ հուզառատ և ոգեկոչող: Անդրադառնալով բանակի անցած ուղուն՝ զուգահեռներ անցկացվեցին Պ.Սևակի բանաստեղծություններով՝ «Անմահները հրամայում են», «Պատերազմ և խաղաղություն» ժողովածուներից, կատարվեցին բանակին նվիրված երգեր:

Ուսանողները անմահ քաջերին նվիրված բանաստեղծություններով և փառաբանական խոսքերով ևս մեկ անգամ շեշտեցին, որ հայն անկոտրում ու խիզախ է, որ հայ զինվորի սխրանքն անմահ է ու անգնահատելի:

Օրվա ավարտին հրաձգության դասընթացներում լավագույն արդյունքներ ցուցաբերած ուսանողները պարգևատրվեցին պատվոգրերով:

## Գրքի տոնը՝ ՍԵՊՖԱ-ում...

Հայաստանում Գրքի տոնը նշվում է արդեն 16 տարի և մեր կենտրոնն էլ անմասն չմնաց. ՈՒԽ նախաձեռնությամբ ՍԵՊՖԱ-ում իրականացվեց հան-

դիպում ժամանակակից երիտասարդ գրող Օֆելի Դալաքյանի հետ: Ջերմ ու մտերմիկ մթնոլորտում անցկացված հանդիպման ընթացքում ուսանողներն ընթերցեցին հատվածներ գրողի ստեղծագործություններից, քննարկեցին «Սերը կգտնի քեզ» և «Նրան, ով նամակներ չի կարդում» պատմվածքների ժողովա-

Օֆելի Դալաքյանը պատմեց, թե ինչպես է սկսել ստեղծագործել, ինչից է ոգեշնչվում, որոնք են այն կարևոր արժեքները, որոնք արտացոլված են իր ստեղծագործություններում: Բոլորը միաբերան էին, որ եթե գրքից հեռանանք, կկորցնենք ամեն ինչ, իսկ եթե նրա հետ ենք, ապա պահում ենք մեր արժեքները:

Վերջում ուսանողները միմյանց գրքեր նվիրեցին, պայմանավորվեցին պարբերական հանդիպում-քննարկումներ իրականացնել Ավետիք Իսահակյանի անվան գրադարանում:

## Վարպետաց դաս

Schwarzkopf Professional Armenia ապրանքանիշի գլխավոր խորհրդատու Արսեն Մանասարյանը իր փորձը փոխանցեց ՍԵՊՖԱ-ի ուսանողներին: «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում»

մասնագիտության 2-րդ և 3-րդ կուրսերի ապագա վարսահարդարները մեծ ոգևորությամբ մասնակցեցին դասին, իսկ Ա.Մանասարյանը «Կտրվածքի անգլիական տեխնիկա» և «Ներկաբանություն» թեմաներով վարպետաց դասի ընթացքում փոխանցեց գիտելիքների մեծ պաշար:

## Այս ձեռքերը՝ մո՛ր ձեռքերը...

Հայ կինը միշտ եղել է ազգի հենարանը, իսկ մանկավարժը՝ վաղվա սերնդի կրթողն ու դաստիարակը, այսինքն՝ երկրի ու ժողովրդի ինքնության պահապանը: Կանանց տոնի նախօրեին ՍԵՊՖԱ-ի ՈՒԽ նախաձեռնությամբ տեղի ունեցավ տոնական ցերեկույթ, որն այնքան յուրօրինակ էր ու տարբերվող. Օրը նշվեց որպես գեղեցկության, քնքշության և կնոջն ուղղված անսահման սիրո արտա-

հայտման օր: Հնչեցին Պարույր Սևակի, Սիլվա Կապուտիկյանի ստեղծագործությունները՝ համեմված Շառլ Ազնավուրի երաժշտությամբ:

Գարնանային այս գեղեցիկ օրը պատեհ առիթ էր, որ ուսանողները ևս մեկ անգամ երախտիքն արտահայտեին ու մեծարեին իրենց կրթող ու դաստիարակող մանկավարժներին:

## Կգա՞ք ՍԵՊՖԱ-ում սովորելու

ՍԵՊՖԱ-ում բաց դռների օր էր...Մարտի 15-ին հյուրընկալել էինք Երևանի մի շարք դպրոցների աշակերտների, ովքեր իրենց ուսուցիչների եւ մեր մասնագետների ուղեկցությամբ եղան խոհարարության, կարի, ատամնատեխնիկական, հրուշակագործության և վարսավիրական լաբորատորիաներում: Աշակերտները լսում և քննում էին ուշադրությամբ, հարցեր էին տալիս, ճշտում:

-Կգա՞ք ՍԵՊՖԱ-ում սովորելու,- մեր հարցին ի պատասխան երիտասարդները անվարան պնդեցին.

- Միանշանակ...

Մեր կենտրոնի որ մասնագիտությունն էլ ընտրեն՝ հեռանկարային ու կարեւոր են երկրի տնտեսության, բնակչության, յուրաքանչյուրիս համար:

Դպրոցականները հարուստ տպավորություններով հեռացան, ոմանք՝ մասնագիտության ընտրության հարցում արդեն որոշում կայացրած: